Կազմված է «20» 05 2020 թ. և
բաղկացած է 8 թերթից

Տպագրված է ընդամենը 4 օրինակ
Օրինակ N 3

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարար

2020 թվականի մայիսի 22-ի
թիվ 652 -Ա հրամանով

Նախարար _____

Ա. Հարությունյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի Սպանդարյանի տարածքային
բաժնի կողմից 18.02.2003թ.
Գրանցման թիվ՝ 286.210.04877
Վկայականի թիվ՝ 03Ա 059193

Թիվ _____ փոփոխությունը
գրանցված է Հայաստանի
Հանրապետության արդարադատության
նախարարության իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի կողմից

«02» 06 2020թ.

«Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

(նոր խմբագրությամբ)

ԵՐԵՎԱՆ 2020

Հավելված
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարի
2020թ. _____ ____-ի N _____-Ա
հրամանի

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ «Կազմակերպություն») շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, մշակութային գործունեություն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություն է:

2. Կազմակերպության հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության Կառավարության:

3. Կազմակերպությունը «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական հիմնարկի իրավահաջորդն է:

4. Կազմակերպությունը վերագրանցված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

5. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):

6. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Թումանյան 54:

7. Կազմակերպությունը, որպես սեփականություն ունի առանձնացված գույք, և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունն իր անունից ձեռք է բերում և իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

8. Կազմակերպության անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

2) հայերեն կրճատ՝ «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ

3) ռուսերեն լրիվ՝ «Национальный академический театр оперы и балета им. А. Спендиаряна» государственная некоммерческая организация,

4) ռուսերեն կրճատ՝ «Национальный академический театр оперы и балета им. А. Спендиаряна» ГНКО,

5) անգլերեն լրիվ՝ «*A. Spendiarian* Opera and Ballet National Academic Theater» Non-commercial State Organization,

6) անգլերեն կրճատ՝ «*A. Spendiarian* Opera and Ballet National Academic Theater» NCSO:

9. Կազմակերպությունը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանմամբ կլոր կնիք: Կազմակերպությունը կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և անհատականացման այլ միջոցները հայերենի հետ կարող են զուգակցվել նաև ռուսերենով ու անգլերենով: Կազմակերպության խորհրդանիշը հաստատում է տնօրենը՝ խորհրդակցելով գեղարվեստական խորհրդի հետ:

10. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվներ:

11. Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում Կազմակերպության արտավորությունների, իսկ Կազմակերպությունը՝ հիմնադրի պարտավորությունների համար:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

12. Կազմակերպության գործունեության առարկան մշակութային գործունեության իրականացումն է:

13. Կազմակերպության գործունեության նպատակներն են՝

1) պահպանել և զարգացնել համաշխարհային և ազգային մշակութային արժեքները, դրանց հաղորդակից դարձնել հանդիսատեսին Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում.

2) ապահովել թատրոնի, որպես թատերա-երաժշտական արվեստի կենտրոնի բարձր, միջազգային մակարդակ.

3) ստեղծել պայմաններ արտիստների մասնագիտական որակավորման բարձրացման և սերնդափոխության համար.

4) ստեղծել և իրականացնել ազգային, դասական ու ժամանակակից երաժշտարվեստի բնագավառում թատերական բեմադրություններ, ծրագրեր և ապահովել դրանց հանրայնացումը.

5) պահպանել ու զարգացնել օպերայի և բալետի ազգային ավանդույթները,

6) իր կանոնադրական խնդիրների իրականացման նպատակով համագործակցել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիների ու կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ.

7) իրականացնել մշակութային գործունեության բնագավառում այլ նպատակներ:

14. Կազմակերպության կողմից կանոնադրության 14-րդ կետի 4-րդ ենթակետով իրականացվող գործունեությունը ներառում է՝

1) սեփական կարիքների համար բեմադրական գույքի պատրաստում, այդ թվում՝ ռեկվիզիտների, շինծու իրերի, բոլոր տեսակի դեկորների, կահույքի, բեմական և թատերական զգեստների, ներառյալ՝ գլխարկների, կոշիկների, կեղծամների, բեմական կահավորանքի առարկաների պատրաստում.

2) սեփականության իրավունքով իրեն պատկանող կամ ամրացված սարքերի ու սարքավորումների սպասարկում և վերանորոգում.

3) սեփականության իրավունքով իրեն պատկանող կամ ամրացված գույքի կազմում առկա մշակութային ժառանգության առարկաների պահպանում, այդ թվում՝ թանգարանային և գրադարանային ֆոնդերի, արվեստի առարկաների պահպանում:

15. Կազմակերպությունը կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

1) մշակութային նշանակության իրերի արտադրական գործունեության իրականացում.

2) կազմակերպության գործունեությանն առնչվող մշակութային զբոսաշրջության ծառայությունների մատուցում կամ մշակութային կրթության բնագավառում ծառայությունների մատուցում.

3) իր արտադրանքի (ապրանքների) իրացում.

4) հանրային սննդի կազմակերպում՝ Կազմակերպության աշխատակիցների, հյուրերի կամ հանդիսատեսի համար:

16. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով Կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

17. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրագործելու համար:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

18. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորված պետական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, գործադիր մարմինը՝ տնօրենը: Կազմակերպության կառավարման մարմինների լիազորությունները, ինչպես նաև կառավարման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով և սույն կանոնադրությամբ:

19. Կազմակերպության հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

20. Կազմակերպության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) կազմակերպության հիմնադրումը.

2) կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

3) կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը.

4) օրենքով նախատեսված այլ հարցերի լուծումը:

21. Լիազորված պետական մարմինն իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

22. Լիազորված պետական մարմինը՝

1) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է կազմակերպության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

2) իրականացնում է կազմակերպության գործունեության վերահսկողությունը.

3) հաստատում է կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը.

4) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության տնօրենի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները.

5) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

6) վերահսկողություն է իրականացնում կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

7) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս կազմակերպության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքման համար.

8) հիմնադրի կողմից սահմանված կարգով սահմանում է կազմակերպության շահույթի տնօրինման ուղղությունները.

9) հաստատում է կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ պետությանը պատկանող գույքի կազմը.

10) հաստատում է կազմակերպության կանոնադրությունը և դրանում կատարում փոփոխություններ .

11) կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը.

12) հաստատում է կազմակերպության կառուցվածքը.

13) նշանակում է կազմակերպության լուծարման հանձնաժողով և հաստատում լուծարման հաշվեկշիռը .

14) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

23. Կազմակերպության լիազորված պետական մարմնի ղեկավարը, տնօրենը, նրա տեղակալները, կազմակերպության անունից հանդես գալիս, պետք է գործեն բարեխղճորեն և ողջամտորեն՝ ի շահ կազմակերպության:

24. Կազմակերպության տնօրենը օրենքով, հիմնադրի, լիազորված մարմնի և կազմակերպության կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի որոշումների, կազմակերպության կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

25. Կազմակերպության տնօրենը՝

1) Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով, հիմնադրի, լիազոր պետական մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

2) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ.

3) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով.

4) սահմանում և լիազորված պետական մարմնի հաստատմանն է ներկայացնում կազմակերպության կառուցվածքը, հաստատում է կազմակերպության հաստիքային ցուցակը և դրանում կատարում փոփոխություններ.

5) կազմում է կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշվի նախագիծը և ներկայացնում լիազորված պետական մարմնի հաստատմանը.

6) հաստատում է կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը.

7) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

8) պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի գանձապետարանում (այսուհետ՝ գանձապետարան) բացում է հաշիվներ.

9) աջակցում է կազմակերպության խորհրդակցական մարմինների աշխատանքներին.

10) լիազոր մարմնի քննարկմանն է ներկայացնում կազմակերպության ֆինանսատնտեսական հաշվետվությունը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը.

11) նշանակում է իր տեղակալներին, կատարում է աշխատանքի բաշխում նրանց միջև.

12) Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը, օրենքով սահմանված կարգով ընդունում է ներքին իրավական ակտեր.

13) վերահսկողություն է իրականացնում արտիստների կատարողական մակարդակի բարձրացման, կազմակերպության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

14) ապահովում է կոլեկտիվում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումը.

15) ապահովում է բյուջետային հատկացումների, հիմնադրի և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացված միջոցների արդյունավետ օգտագործումը, սանիտարական նորմերի ու կանոնների, աշխատանքի անվտանգության և այլ պարտադիր նորմերի պահպանումը.

16) ներկայացնում է կազմակերպությունը պետական, տեղական ինքնակառավարման մարմիններում, այլ կազմակերպություններում, ինչպես նաև օտարերկրյա պետություններում.

17) օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն օրենքների, հիմնադրի, լիազոր պետական մարմնի, այլ իրավական ակտերի և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար.

18) իրականացնում է օրենքին չհակասող և կազմակերպության կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

26 Տնօրենն իր լիազորությունների շրջանակներում իր կողմից ընդունված ցանկացած որոշում պետք է ձևակերպի գրավոր հրամանով, եթե օրենքով կամ կազմակերպության ներքին իրավական ակտերով տվյալ լիազորության համար նախատեսված չէ բանավոր ընթացակարգ:

27. Կազմակերպության տնօրենը պարտավոր չէ կատարել լիազոր պետական մարմնի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

28. Տնօրենի հիվանդության, գործուղման կամ այլ հիմքով աշխատանքի չներկայանալու դեպքում նրա լիազորություններն իրականացնում է նրա տեղակալը կամ այլ անձ, որին լիազորել է լիազոր մարմինը:

29. Տնօրենի լիազորությունները դադարում են օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Տնօրենի պաշտոնի թափուր տեղ առաջանալու դեպքում տնօրենի պաշտոնի ժամանակավոր պաշտոնակատար նշանակում է պետական լիազոր մարմինը:

30. Կազմակերպության տնօրենի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են պետական լիազոր մարմնի որոշմամբ, եթե՝

ա) նա դիմում է դրա մասին.

բ) լրացել է նրա 65 տարին.

գ) նա իր գրավոր համաձայնությամբ ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է իր պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի.

դ) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով նա ավելի քան չորս ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի.

ե) նա ավելի քան երեք օր անընդմեջ անհարգելի պատճառներով չի ներկայացել աշխատանքի.

զ) նա նշանակվել է պաշտոնի օրենքի պահանջների խախտմամբ, կամ առաջ են եկել «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանգամանքները.

է) օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը.

ը) նա իր գործառույթներն իրականացնելիս կազմակերպությանը կամ պետությանն իր մեղքով հասցրել է վնաս, որի գումարը գերազանցում է կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի հինգ տոկոսը.

թ) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.

ժ) նա կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.

ժա) մեկ տարվա ընթացքում օրենքի խախտման համար ենթարկվել է կրկնակի քրգապահական պատասխանատվության.

ժբ) կազմակերպության կողմից վճարման ենթակա հարկերը կամ պարտադիր այլ վճարները իր մեղքով՝ սահմանված ժամկետից հետո հաշվետու ժամանակաշրջանում չի վճարել:

IV. ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

31. Կազմակերպությունում ստեղծագործական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում է խորհրդակցական մարմին՝ գեղարվեստական խորհուրդ: Կազմակերպությունում կարող են ձևավորվել խորհրդակցական կամ խորհրդատվական այլ մարմիններ:

32. Կազմակերպության խորհրդակցական, խորհրդատվական կամ այլ մարմինները, դրանց կազմավորման կարգը, լիազորություններն ու գործունեության կարգը սահմանվում են տնօրենի հրամանով:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

33. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է Կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

34. Հիմնադրման ժամանակ Կազմակերպությանը հիմնադրի կողմից որպես սեփականություն հանձնվող գույքի չափը սահմանվում է լիազորված պետական մարմինը: Լիազորված պետական մարմինը չի կարող որպես սեփականություն հանձնել նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկից ավելի արժողությամբ գույք, եթե օրենքով կամ հիմնադրի որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

35. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը և գույքային իրավունքները:

36. Հիմնադիրը սեփականության իրավունքով Կազմակերպությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ, բացառությամբ պետական կազմակերպության լուծարումից հետո մնացած գոյքի: Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է Կազմակերպությունը:

37. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

38. Կազմակերպությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են պետական բյուջեի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

39. Հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք: Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը:

40. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

41. Կազմակերպությունն իրավունք ունի հիմնադրի կողմից սահմանված կարգով իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը 1 տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

42. Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները և բաժանելի բարելավումները Կազմակերպության սեփականությունն են:

43. Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

44. Հիմնադրի կողմից գույքը Կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

45. Հիմնադրի կողմից Կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմանբ իրավունքի պետական գրանցման պահից:

VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

46. Կազմակերպությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: